ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«27» փետրվարի 2019թ. N 72/74-Ա 2019

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 408-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2019 թվականի փետրվարի 4-ի N 259-Ա հրամանով հաստատված հավելվածի 7-րդ կետը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի փետրվարի 13-ի N ՎՀ/ՊԳ.2/1602-19 գրությունը.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2017 թվականի հոկտեմբերի 27-ի «Լիլիթ Գասպարյանին « Էջմիածին» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն նշանակելու մասին » N 408-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) որոշմամբ հաստատված հավելվածի 4.1 կետում «տվյալ տարվա համար օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի և վարձատրման գործակցի (3.5) արտադրյալի չափով» բառերը փոխարինել «360000 (երեք հարյուր վաթսուն հազար) և յուրաքանչյուր ամիս վճարովի ծառայություններից 1 տոկոսի չափով որպես բոնուսային վճար» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Недействительная подпись

VERIFIED OCSP 27.02.2019 15:08:24 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230